

ՆԱՏՈՒՐԱԼԻՍՄԸ ԵՒ ԶՈՒԱՆ

ՖԵԼԻՔՍԻ

(Շարունակութիւն ')

Մ. ՃԻՇՏ ՈՒՍՈՒՄԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ, ՀԵՐՈՍԵՆՐԻ ՖԻԶԻՈԼՈԳԻԱՅԻ ԵՒ ՀՈ-
ԳԵԲԱՆՈՒԹԵԱՆ:

Հոգեբանութեան բացակայութիւնը դասական գրականութեան մէջ և դրա պատճառը: Արդի հալեացքները հոգեբանութեան վրա: Սիրոյ ծագումն «Ապրելու երջանկութիւն» բովանդակումն մէջ:—Սէրը Զոլայի վէպերում:—«Արքա Մուրէի մեղքը» և Սերտի հոգեբանութիւնը:—Կրքերի ընդհարումն:—«Երազ» (Le Rêve). Անժելիկի օտարօտի հոգեբանութիւնը և Նրա մեկնութիւնը:—Ֆլորի սէրը «Գործի» մէջ:—Զոլայի հոգեբանութեան բնորոշումն:—Նրա սոսկ հոգեբանական վէպերը: L'Oeuvre (Գործ) և Կլոդի հիւանդական հոգեբանութիւնը:—La Bête Humaine և Ժակի հիւանդական հոգեբանութիւնը:—«Le Docteur Pascal» (Բժիշկ Պասկալ) և Պասկալի բարդ հոգեբանութիւնը:—Անխփումն:

Dans un psychologue il y a un idéologue et un logicien.

E. Zola

Զորորդ սկզբունքը, որին հաւատարիմ է մնացել Զոլան իր գրածներում:—Հոգեբանութեան մշակումն է:

Հոգեբանական տարրը այնպիսի մեծ տեղ է բռնում բովանդակումն:

1) Տես «Մուրճ» 1892 թ. №№ 5, 6, 11, 1893 թ. № 6 և 7—8.

մէջ, որ նրա մանդամասն ուսումնասիրութիւնը չափից դուրս կը ծանրաբեռնէր մեր այս էփուդը: Մենք խօստացել ենք մի ուսումնասիրութիւն ներկայացնել հոգեբանական գրական ուղղութեան մասին և այն ժամանակ մանրամասն կը քննենք նորագոյն հոգեբանական հայեացքները արդի գիտութեան տեսակէտից:

Առայժմ մենք կը կամենայինք մի թուուցիկ հայեացք գցել Զոլաի բոմանների հոգեբանութեան վրա, որովհետեւ նա մի առանձին գոյն ունի և գուցէ լաւ ըմբռնւած չէ կրիտիկոսներից: Զոլաի հերոսների հոգեկան աշխարհը չափազանց ընդարձակ է: Եւ այդպէս էլ պէտք է լինէր, քանի որ հեղինակը բոլոր դասակարգերից է վերցրել իր գործող անձերը: Ամենանորբ արիստոկրատներից սկսած մինչև ամենադուռնի գիւղացին անցնում են մեր աչքի առաջ հազար ու մէկ հոգեկան յուզմունքների մէջ: Անասելի դժարութիւն կայ այսպէս բազմակողմանի հոգեբան լինել: Եւ ամենամեծը, ամենադարմանալին այն է, որ գրողը իր սեփական հոգին չէ դնում համ արիստոկրատի, համ բանւորի, համ տղամարդու, համ օրիորդի մէջ: Թոյլ գրողը միշտ և ամեն տեղ իր սեփական հոգեբանութիւնն է նկարագրում, նա եսական է բառիս ամենապարզ նշանակութիւնով:

Յայտնի շեփացի գրող, Օլա Հանսոնը, խօսելով այն գրքերի մասին, որոնց մէջ նկարագրւում է գիւղացի-հողագործը, ասում է. «Այո, այս բոլոր հեղինակների գրքերը պարունակում են իրանց մէջ գիւղական կեանքի պատկերներ: Բայց իզուր կ'որոնէիք նրանց մէջ գիւղացուն իրան, որովհետեւ նրանց միջի մի քանի հառ ու կտոր Ֆակտերը կարծես հեռագիտակի միջով են դիտւած»:

Այլապէս չի էլ կարող լինել, այնքան հեռու է գիւղացու հոգեբանութիւնը մի բուրժուա-հեղինակի հոգեբանութիւնից:

Անտարակոյս ոչ մի հեղինակ չի կարող պարծենալ, որ նա իր հոգեբանական էփուդներում միանգամայն օբյեկտիւ է եղել: Միայն զգացողութիւնների քանակութեան մէջն է տարբերութիւնը: Ով շատ է զգացել, շատ էլ արտագրում է, ով բազմակողմանի զգացմունքներ է ունեցել, նրա հոգեբանութիւնն էլ բազմակողմանի կը լինի: Ընթերցումն, թատրոնը, վերջապէս ընդհանուր զարգա-

ցումն միջոց են տալիս հեղինակին հարստացնել իր գրւածների հոգեբանական մասը:

Դասական գրականութիւնը, որը չկարողացաւ բռնան ստեղծել, չուեց նաեւ լուրջ հոգեբանական էութիւններ: Յունական և հռոմէական բանաստեղծութիւնները զբաղւած էին բնութիւնով և նկարագրում էին նրա, իրանց անհասկանալի, բայց սոսկալի երեւոյթները: Հնադարեան մարդու ուղեղը դեռ չէր հետազօտել բնական երեւոյթները. արեգակը ու կայծակը, մրրիկն ու երկրաշարժը, ջուրն ու կրակը, բուսականութիւնն ու կենդանիները դեռ քննւած չէին և մարդուս խորհրդածութեան միակ նիւթերն էին դառել: Զհասկանալով թէ ինչ է կայծակը, ինչ է երկրաշարժը, կամ ծովի ալեկոծումն, հին տգէտ մարդը այդ բոլոր երեւոյթները վերագրում էր զանազան շատուածների և շատուածահինների: Այսպիսով երկինքն ու երկիրը լցւել էին աստուածներով և դէերով, որոնք մարդուս օգտուէտ և ֆնասակար բնութեան երեւոյթների ղեկավարողն էին:

Սրանով է բացադրւում, որ դասական մարդկանց ուղեղը, ընկճւած լինելով այս անբացադրելի հրաշքային երեւոյթներից, անդադար նրանցով էր զբաղւած: Սրանով է բացադրւում հին դարերի խորհրդականութիւնը (միստիցիսմ), որը, կրկնում ենք, ոչ այլ ինչ էր, եթէ ոչ մարդուս ուղեղի մանկութեան պտուղը, եթէ ոչ մարդու խոստովանութիւնը, որ նա տգէտ է...

Սակայն ուշով դիտելով բնական երեւոյթները, մարդս կամաց-կամաց սկսեց թափանցել նրա գաղտնիները և քիչ-քիչ այդ գերբնական երեւոյթները իրանց բացադրութիւնն ստացան և երկնքի ու երկրի ճշգրտները գնալով աւելի և աւելի պարզեցան: Այն ժամանակ մարդիկ սկսեցին սանձել իրանց սրտի երկիւղը բնական երեւոյթներից, շատուածները մի առ մի անհետացան, կուսքերը խորտակեցան և նրանց փլատակների վրա կամաց-կամաց բարձրացաւ դիտութեան զօրեղ աստուածը:

Մարդուս խելքը ազատեց կաշկանդներից և սկսեց զարգանալ ու քննադատութեան կոնտրոլի ենթարկել բնութեան երեւոյթները: Այն ժամանակ ծնւեցան մեծ յեղափոխիչներ մարդկային

խելքի, որոնց անունները ոսկեզօծ տառերով փորագրւած են առաջադիմութեան արձանի վրա: Երբ մարդ մեկնեց նրան երբեմն սարսափեցնող երևոյթները, մանաւանդ, երբ նա սկսեց նաև սանձել նրանց և մինչև անգամ օգուել նրանցից, այն ժամանակ նրա մէջ յարուցեց յարգանք դէպի իր սեփական հանճարը, և այն ժամանակ նա սկսեց արդէն ուսումնասիրել իր սեփական էութիւնը, որպէս զի զոնի իր մէջ այն ոյժը, որը սանձեց բնութիւնը:

Այն ժամանակ մարդուս հանդարտած ուղեղը սկսեց իրանով զբաղւել և ուսումնասիրել իր ֆիզիկական և հոգեկան յատկութիւնները: Ակեցին զարգանալ հոգեբանական գիտութիւնները, որոնք պիտի կամաց-կամաց մոնէին բոմանի մէջ, մինչև որ մի օր ամբողջապէս կ'անէին նրան, ինչպէս այդ եղել է այսօր:

Մինչև վերջին տասնեակ տարիները հոգեբանական գիտութիւնը մշակոււմ էր և ուսումնասիրոււմ առանձնապէս, մետաֆիզիկների գրչի տակ, և միայն վերջին կիսադարում, երբ մարդուս կազմածքը մանրամասն զննեց, երբ նրա իւրաքանչիւր օրգանի, իւրաքանչիւր մասնիկի ֆունկցիան (կատարած դերը) մանրամասն ուսումնասիրեց, այն ժամանակ հասկացեց, որ հոգեբանութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ ուղեղի ներքին գործունէութիւնը, նրա ֆունկցիան: Այսպիսով հոգեբանութիւնը դարձեց վերացական գիտութիւն լինել և բնական գիտութիւնների շարքն անցաւ: Մի ֆակտ, որը լուսաբանեց, զոնէ բացաւրեց, մարդակազմութեան և ֆիզիոլոգիայի զարգացման շնորհով — այն է, որ մարդուս ֆիզիկական կեանքում կատարւած ամենաշնչին փոփոխութիւնները անմիջապէս փոփոխութիւն են մտցնում նոյնպէս նրա հոգեկան աշխարհը. և իբրև ամենապարզ ապացոյց կարելի է առաջ բերել սեռական օրգանների զարգացումն, որը այնպիսի հիմնական փոփոխութիւն է մտցնում պատանու հոգեկան կեանքում:

Զօլաի La Joie de Vivre (Ապրելու Երջանկութիւն) բոժանում այս վերջին հոգեբանական երևոյթը հիանալի կերպով նկարագրւած է:

Ահա մի փոքրիկ աղջիկ, որը տարւում է գիւղը դեռ երեխայական հասակում: Նա մեծանում է բնութեան գոգում, մի բարոյական բնտանիքի մէջ, հեռու ամեն տեսակ վատ ազդեցութիւն-

ներից: Հիմա հետեցէք նրա ֆիզիկական զարգացմանը, տեսէք, թէ ինչպէս նրա սեռական օրգանների զարգացումն չեղաշրջում է նրա ամբողջ հոգեբանութիւնը: Տեսէք, թէ ինչպէս կամաց-կամաց փոքրիկ աղջկանից դուրս է գալիս մի կին, բառին ֆիզիոլոգիական նշանակութիւնով, այսինքն, հասունացած սեռական օրգաններով: Կարգացէք այն տրիական տեսարանը, որտեղ նա տկլոր հայելու առաջ դիտում է իր հրաշալի կանացի հրապոյրները, սքանչանում է այդ հարուստ մարմնով, կամ այն տեսարանը, երբ նա իր առաջին դաշտանն է տեսնում, երբ նրան թւում է, թէ իր ամբողջ գոյութիւնը արեան հետ վազում է իր ծնկների միջով, — ահա այն ֆիզիոլոգիական երևոյթները, որոնք կամաց-կամաց զարմացման են հասցնում միամիտ երեխային, մինչև որ նա յանկարծ հարց է տալիս իրան, թէ ինչի համար է այս փարթամութիւնը, ի՞նչ նպատակով է բնութիւնը այսքան հեղուկ լցրել նրա մարմնի մէջ:

Իբրև այս հարցի պատասխան, նա սիրահարւում է տան միակ երիտասարդի վրա, և այսպիսով Զոլաի գրչի տակ սիրոյ ծագումն բացադրւում է իբրև արտաշայտութիւն օրգանների ֆիզիկական հասունութեան:

Բայց ամեն հոգեկան երևոյթ չի կարելի այսպիսի բնական կերպով բացադրել: Անտարակոյս, խորը քննելով և հետազօտելով, հնարաւոր է հոգեբանին նոյն ձևի բացադրութիւն տալ և միւս կրքերին, բայց այդ չի կարելի պահանջել ըոմանիստից, որը ստիպւած չէ բնագէտ լինել:

Ըոմանիստը այսպիսի դէպքերում օգտւում է դիտողութիւնից և (գլխաւորապէս) իր սեփական հոգեբանութիւնից: Այս է պատճառը, որ մի որոշեալ հեղինակի հերոսների հոգեբանութիւնը որոշեալ գոյն ունի, որը է հեղինակի սեփականի գոյնը:

Զոլաի հոգեբանութեան գլխաւոր յատկանիշն այն է, որ նա նիւթական է: Երբ դէպքը բերում է, հեղինակը աշխատում է կապել սիրոյ աճումն տրիանքի աճման հետ: Նրա սէրը բացա-

ուարար միայն գաղափարական է մնում, իսկ ընդհանրապէս նա մարմնանում է սեռական ակտի մէջ: Հեղինակը սիրում է ցոյց տալ իր արտիստիկ նկարագրութիւններով, որ միաճաղին տարբերութիւն կա մարդու սիրոյ մէջ, նայելով, թէ սիրած առարկան հեռու է, թէ մօտ, տրփանքի մէջ, թէ նրանցից զուրս և այլն: Նրա բոմաններում սեռական յարաբերութիւնների միջոցին սէրը հասնում է իր գաղաթնակէտին և փոխում է անտարբերութեան կամ նոյն իսկ զզւանքի՝ յարաբերութիւններից յետոյ:

Զուան այսպիսով սէրը վերածում է և միշտ աշխատում է վերածել Ֆիզիկական պահանջի, իսկ Լամարտինի, Անդրէ Շէնէի և այլ բոմանտիկների սէրը նա ընդունում է իբրև հիւանդական երեւոյթ:

Սակայն Զուան էլ զգում էր մի ընդհանուր սէր ստեղծելու անկարելիութիւնը, զգում էր, որ շատ չաճախ սէրը Ֆիզիկական բաւականութիւն չի պահանջում և ընդհակառակ խորշում է նրանից, և որ նա կարող է դոջութիւն ունենալ իբրև մի վերացական զգացմունք, որի նիւթականացումն խախտում է նրա մաքրութիւնը:

Անտարակոյս Պոլ և Վիրթինիի, Հէրնանիի և Գոնա Սոլի սէրը հասկանալի է մեզ այն ժամանակ միայն, երբ նա անարատ է: Իսկ այն օրից, երբ այդ սէրը տրփանքի է հասնում, սեռական յարաբերութիւնների է վերածւում, այն օրից նրա զօրութեանը, իբրև հոգեկան ուժեղ կրքի, հարւած է դիպչում: Այս լաւ են զգացել բոմանտիկ գրողները, որոնք սպանում են իրանց հերոսներին կամ նախ քան նրանց սիրոյ նիւթաւորւելը, կամ անմիջապէս յետոյ:

Զուաի հոգեբանական հետիւղներից, մեր կարծիքով, ամենայնջողը սիրոյ էտիւդն է: Այս հեղինակի մեծ տաղանդը արտափայլում է այս ուսումնասիրութիւնների մէջ: Այդտեղ տեսնւում է խոր հետազօտողը և դրական հեղինակը:

Արհամարհելով փարիսեցի կամ ոգէտ գրողների չափշտակումը, մեծ բոմանտիստը, ինչպէս տեսանք, սէրը վերածում է օրգանների Ֆիզիքական զարգացման:

Ահա նրա սկզբունքը, որը հիմնված է արդի հոգեբանության գուցեմունքների վրա:

Սակայն սերը տարբեր կերպարանք է ստանում, նայելով թե նիւթական է նա, թե իդէալական, ազատ է թե ծնչւած: Այս զանազան դէպքերը հետազօտւած են Զոլայի վէպերում:

La Joie de Vivre (Ապրելու Երջանկութիւն), La Faute de l'Abbé Mouret (Աբբայ Մուրէի մեղքը), Une Page d'Amour (Մի Սէր), Le Rève (Երազ), L Oeuvre (Դործ) բոմանները նւիրւած են սիրոյ ուսումնասիրութեանը:

«Ապրելու Երջանկութիւն», «Աբբայ Մուրէի մեղք» և «Երազ» վէպերում հեղինակը աշխատում է սիրոյ ծագումն սեռական օրգանների զարգացումից դուրս բերել, և տարբերութիւնը միայն այդ զգացմունքի զարգացման մէջն է:

«Ապրելու Երջանկութեան» մէջ Զոլան (ինչպէս տեսանք) ուսումնասիրում է մի սէր, որի ծագումն և զարգացումն բնական են: Այդ սէրը արդեւելքների չի հանդիպում աղջկայ հոգու մէջ, որը ազատ է ուրիշ կրքերից:

«Աբբայ Մուրէի» և «Դործի» մէջ սերը ընդհակառակը երկար կռիւ է վարում ուրիշ կրքերի դէմ և միայն ժամանակակարգայէս չաղթում է նրանց: «Երազի» մէջ Անժելիկը իդէալայէս վերացացական սէր է տածում դէպի մի վերացական էակ, որը մի օր կերպարանաւորւում է Ֆելիսիենի մէջ:

Զոլայի սիրոյ հետազօտութիւնները այնքան նշանաւոր և այնքան խրատական են, որ մենք օգտաւէտ ենք համարում մի քանիսը առաջ բերել այստեղ, քանի որ, կրկնում ենք, եւրոպական կրիտիկան մի հաւաքական էտիւէ չի աւել մինչև այժմ Զոլայի հոգեբանութեան մասին:

Մենք տեսանք, թէ ինչ էր սերը «Ապրելու Երջանկութեան» մէջ: Ուսումնասիրենք այժմ նոյն տեսակէտից «Աբբայ Մուրէի մեղքը» և «Երազը»: «La Faute de l'Abbé Mouret» (Աբբայ Մուրէի մեղքը), և այս հրաշալի հոգեբանական էտիւզը, որը միշտ մոռանում են կրիտիկոսները: Մեր կարծիքով, այս բոմանը կարող

է առաջնակարգ հոգեբանական վէպերի շարքն անցնել և, քանի որ մենք ալիզափ կարեորութիւն ենք տալիս նրան, թող թոյլ տրւի մեզ մի քանի խօսք ասել նրա մասին:

Աբբայ Մուրէն մի երիտասարդ քահանայ է, որը իր նախնիքներից ժառանգել է արամադրութիւն դէպի մոլութիւններ (manies): Մատաղ հասակում նա հակումն է զգում դէպի հոգեորականութիւնը և քահանայ է ձեռնադրւում: Այնուհետև երկար տարիներ Սերժը աղօթքի և բարեպաշտութեան մէջ է անցկացնում: Երիտասարդ քահանայի բոլոր հոգեկան ուժերը կամաց-կամաց նւիրւում են Ասուածամօր պաշտութեան, և մոռացնել են տալիս նրան, կամ, աւելի լաւ ասած, սանձում են նրա մէջ նիւթական սիրոյ կայծը: Նա կրօնամոլ է դառնում բառիս բուն նշանակութիւնով, և իբրև մի ձև կրօնամոլութեան, նրա հոգուն տիրապետում է մի անտանձ և, նրա ամբողջ գոյութիւնը լափող, կիրք.—պաշտումն Ասուածամօր: Այն, Սերժը պաշտում է Ասուածամօրը, և այդ զգացմունքը մի հիւանդական զկացմունք է, որը պէտք է լաւ ըմբռնել՝ Զոլաի հոգեգիտական հանձարի ուժը հասկանալու համար:

Գիշեր-ցերեկ, մոռանալով ամբողջ աշխարհը, Սերժը ծնկաչոք դիտում է Ասուածամօր մարմարիոնէ արձանը, անասան սէրը և սքանչացումն սրտում: Արձանի հրեղէն ծառազայթները թափանցում են նրա ուղեղը, ջերմացնում են նրա հոգին: Անասելի յուզմունքների մէջ, Սերժը զարգանդով չոքէ՛ւոք բարձրանում է սասձարի սանդուխտները, որպէս զի որքան կարելի է մօտենայ անարատ Կոյսին, լիզի նրա ոտների տակի մարմարը, արտասուքով լանայ քարի փոշին! Եւ այդ արձանը նրա շլացած աչքերին ոգի է ստանում, շունչ է առնում, կենդանանում է, դարձնում է դէպի նա իր ասուածային աչքերը և իր կուսութեան անմեղութեան մէջ ժլուտում էր նրա աղօթքին:

—Մայր անբիծ, մայր անարատ, մայր լաւիտեան կուսական, աղօթիւր ինձ համար: Դու—իմ ապաստանարանը, դու—իմ հրճանքի աղբիւրը, դու—իմ մոլեկալութեան տաճարը, որին նուիրեցի մաքրութիւնս: Եւ իմ անարատ հոգիս քեզ եմ լանձնում, ազալում եմ, ընդունիր ինձ, քո քողի մի փեղկով ծածկիր ինձ, թազցրու ինձ անմեղութեանդ տակ, որպէս զի ոչ մի մարմնատէր չունչ չհասնի ինձ: Դու լաւիտեանական անբծութիւն ես: Քո Որդին, Յիսուսը, ծնեց Աստծու շնչից, դու

ինքզի ծնեցար անարատ մօրդ արգանդից: Օ! ապրել և մեծանալ, չզգալ ո՛վ զգացմունքներ յամօթը: Օ! չգանալ և բազմանալ, առանց սեռական մօտաւորութեան դարձելի անհրաժեշտութեանը, երկրաչիւն համբո՛ղքի զօրութիւնով միալն՝ ...

Եւ կը կամենալի զեռ. երեխայ լինել ! ... Մի ժամանակ եւ փոքր էի: Օրօրոցս սպիտակ էր, մարմինս սպիտակ էր, մոքերս սպիտակ էին: Եւ քեզ պարզ տեսնում էի, լսում էի քս ձայնը, որով կանչում էի ինձ, եւ քեզ էի դիմում ժպիտն երեսիս... Օ, Մարիամ, պաշտելի Կոյս, ինչի եւ հինգ տարեկան չեմ? Ինչի երեխայ չմնացի? Քեզ կրծքիս կը սեղմէի, կը պարկեցնէի կողքիս, կը համբուրէի քեզ իբրեւ իմ ընկերուհուն, իբրեւ հասակակից աղջկար... Ուրեմն կրկին երեխայ դարձրու ինձ, բարի Կոյս, ամենակարող Կոյս, հինգ տարեկան դարձրու ինձ: Առ ինձանից զգացմունքներս, հասունեութիւնս թող մի հրաշքով վերանալ ինձանից իմ մէջ աճող տղամարդը... Եւ այլ եւ չեմ ուզում զգալ ոչ իմ նեարդերը, ոչ իմ մկանները, ոչ սրտիս բաբախումն, ոչ ցանկութիւններս... Այո՛, եւ ատում եմ կեանքը: Աւելի լաւ է, թող վերջ լինի մարդկութեան գոչութեանը, քան թէ շարունակելի նա դարձելի կրծքի շնորհով... Օ, մահ, մահ! Պաշտելի Կոյս, մեռցրու իմ մէջ ամեն բան ! ... Կոչս լինել և կոչս մեռել, ամենաքաղցր համբո՛ղքներ իմ մէջ պահպանել անարատ կուսութիւնը ! ... Օ, Մարիամ, մաշիր իմ մէջ մարդկութիւնը, ներքինի դարձրու ինձ, որպէս զի աներկիւղ կարողանաս նւիրել ինձ կուսութեանդ գանձը !

Ահա ինչ բառերով է աղօթում Սերժը հրաշալի Կոյսի արձանի առաջ: Նա աղաչում է, որ Ասուածածինը մեռցնի նրա մէջ նրա նիւթական սիրոյ պահանջը, որը օրից օր աւելի և աւելի զօրեղանում է: Նա զղջում է, որ այլ ևս չի կարող խեղդել իր մէջ բնութեան ձայնը: Եւ ինչ հրաշալի կերպով նա նկարագրում է իր հոգեկան կռիւները այս մի քանի բառերով.—Առ ինձանից զգացմունքներս, հասութիւնս ! ... Եւ այլեւ չեմ ուզում զգալ ոչ իմ նեարդերը, ոչ իմ մկանները, ոչ սրտիս բաբախումն, ոչ ցանկութիւններս ! :

Եւ որքան ճշմարիտ է այս զգացմունքը ! ... Նրա մէջ երկու սոսկալի կրքեր կուլի մէջ են—մէկը, ասուածարշտութեան կիրքը, միւսը—սիրոյ: Երկուսն էլ կենդրոնանում են Ասուածածնայ մէջ: Երբեմն Սերժը յափշտակում է այս արձանով, իբրեւ կուսութեան մարմնացումով, երբեմն այս մարմարինի մէջ կանացի

հրապոյրներ է տեսնում: Եւ այս շփոթութիւնը հարւածում է այս մոլեռանդ պաշտողի զգացմունքը և նա աղաչում է իր պաշտած Կոյսին, որ ոչնչացնի, մեռցնի նրա մէջ ծնող տրփանքը, որպէսզի չխանգարւի նրա սիրոյ անբծութիւնը!

Որքան մեծ և որչափ զարհուրելի է այս հոգեկան կռիւը!

Սակայն սէրը թուլանում է և շուտով փոխում է նիւթականի:

Մեծ բովանդատը հետեոյական է իր հոգեբանական էտիւդում: Սերժը մի վտանգաւոր հիւանդութեան մէջ, երկար ժամանակ առանց ուշքի մնալուց յետոյ, բաց է անում աչքերը և տեսնում է իր գլխի վերը նստած մի մատաղահաս օրիորդ, որին երբէք չէր տեսած. և ահա ինչ խօսքերով է ողջունում նրան, կարծես շատ տարիների սիրահար լինէր.

«— Գիտեմ, դու իմ սէրն ես, քո մարմինը իմ մարմնի մի մասն է, և դու սպասում ես, որ ես քեզ իմ գիրկս առնեմ, որպէս զի մենք մի անձն կազմենք... Եւ երազում էի քո մասին, դու կրծքիս մէջն էիր, ես տալիս էի քեզ իմ արիւնը, իմ մկանները, իմ ոսկորները... Ես որոնում էի, թէ ինչ թանկագին բան կալ իմ մէջ, որ քեզ տամ, Դու դուրս եկար իմ աչքերից, իմ բերանից, ես արդ լաւ զգացի: Արթնեցաւ աչն ժամանակ, երբ դուրս եկար իմ միջից: Մարմինդ ջերմութիւն և բուրմունքներ էր արձակում, դու աչն քան քնքուլ էիր, որ մարմնիդ թափւը զարթոյնքից ինձն:

Սերժի մարմնական սէրը աղաւաղում է կաշկանդանքից և բնորոշւում է: Սա մի բնական սէր է, որը աւելի բուռն է միայն երկար ծնշած լինելու պատճառով: Եւ զլսաւորն այն է, որ այդ սէրը արդէն հասունացած էր Սերժի մէջ, այնպէս որ երիտասարդ քահանան մի անծանօթ աղջկայ այնպիսի խօսքեր է ասում, որ կարելի է ասել միայն մի վաղեմի ծանօթի և վաղուց սիրածի: Ինչի? Որովհետեւ Սերժը իր սրտի խորքերում արդէն սիրում էր այն իդէալական աղջկան, որի մարմինը փափագում էր նա: Երկար հիւանդութիւնից յանկարծ պարզւում են կարծես նրա զգացմունքերը և մրտքերը: Հիւանդութեան ճգնաժամը կարծես բժշկել էր նրան կրօնամոլութիւնից և նրա հոգու մէջ միւս կիրքն էր մնացել, այն է. — մարմնական սէրը: Եւ այդ սէրը արդէն հասունացած էր, այնպէս որ, երբ նա աչքերը բացելիս տեսնում է Նլբինին՝ ընդունում է նրան, իբրեւ իր սիրոյ մարմնացումն:

Սերժն ու Ալբինը իրանց սիրով յափշտակած մի քանի ժամանակ ապրում են Պարադիզի դիւթական այգիում, որի սուերի տակ թազցնում են իրանց երջանկութիւնը:

Սերժը մոռացել էր իր պաշտած Ասուածածնին:

Բայց մի օր նրանք մօտենում են այգու պարսպին, որի մի ճեղքով Սերժը նկատում է եկեղեցու գմբէթը:

Այս րոպէում նրա հոգու մէջ իր հին մոլութիւնը կենդանանում է և նա փախչում է Ալբինի գգւանքից, կրկին իրան Ասուածամօր պաշտելուն նւիրելու:

„Le Rève“ (Երազ)-ի մէջ Անժելիկը, այսպէս ասած, իդէալէս է սիրում, այսինքն սիրում է մի իդէալական էակի, որը յետոյ կերպարանաւորւում է Ֆելիսինի մէջ:

Անժելիկը (Վերադիւ հերոսուհին) մի փոքրիկ երեխայ է, որին գտնում է մի ցուրտ գիշեր շէմքի վրա Հիւբերի կինը և որին այս անգաւակ կինը և նրա այրը հարադատ զաւակի նման մեծացնում են: Նրանց զգւանքում Անժելիկը մի զեղեցիկ աղջիկ է դառնում: Տասն և չորս տարեկան հասակում նա արդէն հասունանում է, ընա կին էր դառնում, ասում է հեղինակը, այսինքն առաջին անգամ տեսնում է իր սեռական հասունութեան ապացոյցը:

Այս րոպէից յետոյ Անժելիկը դուրս է գալիս մանկութիւնից, և նրա համար մի նոր կենսաշրջան է սկսւում.—սիրոյ շրջանը:

Ուրեմն մինչև այժմ Զոլան միանգամայն հաւատարիմ է մնացել իր թէօրիաին, որն այնպէս զօրեղ կերպով տրամաբանել էր իր «Ապրելու երջանկութիւն» բովանդակի մէջ.—այն է, որ սիրոյ զգացմունքը ծնւում է սեռական օրգանների հասունութեան միջոցին:

Եւ ոչ մի կրիտիկոս չի նկատել Զոլաի այս հետեւողութիւնը:

Սակայն ահա փաստեր:

Երբ Անժելիկը 14 տարեկան է և կին է դաւել արդէն, նրա հոգում մի առանձին սէր է յարուցւում դէպի կոյսերը, որոնց կենսագրութիւնը յափշտակումով կարդում է, և որոնց անբիծ կուսութիւնը սքանչեցնում է նրան:

Այս սքանչացումն կոյսերի կեանքով բաւականին ապացոյց է,

որ նրա հոգում չարուցւել էր արդէն մի ինչ որ սեռական զգացմունք:

«Այս տարի գարունը մի առանձին քաղցրութիւն ունէր: Նա (Ան-
ժեւիկը) ալժամ տասնութեց տարեկան էր: Մինչև ալսօր նրա հայեացքն էր
միայն զարճանում Վլո-Մարի (ալգու) վերածաղկումն տեսնելով... Իսկ
այս տարի ծառերի առաջին բողբոջը բաբախեցրեց նրա սիրտը: Նրա մէջ
մի ինչ որ չփոթ էր աճում բուսականութեան աճման հետ: Յանկարծակի,
առանց պատճառի, չարուցած չուզմունքներ խեղտում էին նրա կոկորդը:
Մի օր նա իրան Հիւրերտինի գիրկը նկտեց լալով, բայց առանց որ և իցէ
տխրելու պատճառի, ընդհակառակը միանգամայն երջանիկ: Մանաւանդ
գիշերները նա քաղցր երազների մէջ էր անցկացնում, նրա աչքին ինչ որ
ստեղծներ էին երեւում, և նա աչնալիս սքանչացման մէջ էր ընկնում, որ
զարթնելիս չէր վստահանում մտաբերել իր երազները, որոնցից զգացած
երջանկութիւնը չփոթեցնում էր նրան: Նրբեմն, իր մեծ անկողնու խոր-
քում, վեր էր թռչում քնից, ձեռները միացրած և ամուր կրծքին սեղ-
մած, և աչքան խեղտում էր նա չուզմունքից, որ ստիպւած էր լինում
վաղը ցատկիկ անկողնուց լատակի վրա և բանալ լուսամուտը, որի առաջ
կանգնում էր նա սրտիակով սթափեցնող օդի սառնութեան մէջ»:

Ահա ինչ հոգեբանական չուզմունքներ է առաջացնում սեռա-
կան օրգանների հասունութիւնը:

Եւ տեսէք, թէ ինչպէս նոյն բուռն զգացման ազդեցութեան
ներքոյ ամեն ինչ փոխւում է Անժեւիկի շուրջը:

«Առակը խօսում էր անշուշտ, նա մի ինչ որ անորոշ բաներ էր
ասում, որոնք չփոթ էին գլղում նրա (Անժեւիկի) սիրտը: Միթէ այս
առաջւաղ դաշտը չէր ալ ես, ինչի ուրեմն ալժամ ամեն բան փոխւել է և
նորանոր նշանակութիւն է ստացել, կամ գուցէ ինքն է փոխւել, որ ալս-
պէս ամեն տեղ զգում է, տեսնում է և լսում է, ինչպէս բողբոջում է
կեանքը?»

Այսպէս, ահա մի պատահուհի, որի հոգում սեռական հասու-
նութեան միջոցին չարուցւում են աչնալիս զգացմունքներ, որոնցից
նա ամաշում է, բնազդւումով ըմբռնելով նրանց ծագումն: Այս նոյն
զգացմունքը չէ արդիօք, որը տիրապետել էր Սերժին (Աբբայ
Մուրէի Մեղքը), որը իրան նւիրում է Աստուածածնայ պաշտութեանը
իր մէջ ծնած տրփական սէրը խեղտելու համար:

Արդէն Անժեւիկի մէջ սիրելու պահանջը հասունացել է և
ստիպողական է դառել: Նա երեւակայութիւնով արդէն սիրում է
մի իդէալական տղամարդու, ինչպէս սիրում են առհասարակ նեար-
դալին արարածները:

Անժեւիկի նման էակները սիրահարուում են այնպիսի տղամարդկանց վրա, որոնք մի որ և է յատկութիւնով գերազանցում են միւս բոլոր մարդկանց, ինչ և լինէր այդ յատկութիւնը: Այսպէս Գեղեճնան կը սիրէ Ստեղծ-հրէշին և Դոնա Սոլը՝ Հէրնանի-աւազակին:

Եւ նա սիրում է Ֆելիսիանին, որին երբէք չի տեսել, բայց որի մասին Հիւբերտինը ասում էր թէ՛

«Գեղեցիկ է ինչպէս իշխան և հարուստ ինչպէս արքայ»:

—Գեղեցիկ ինչպէս իշխան, հարուստ ինչպէս արքայ՝ կրկնում է Անժեւիկը: Սա չէր անդեօք նրա երազածը, այն երիտասարդը, որը պիտի սիրէր նրան, և որին նա արդէն վաղուց սիրում էր իր կուսական ցանկութիւնների ամբողջ ոյժերով:

«Օհ, ես կը ցանկանայի, կը ցանկանայի իշխանի կլին լինել... Մի իշխանի, որին երբէք տեսած չեմ, որը կը գար մի երեկոյ, կը բռնէր ձեռքիցս և իր պալատը կը տանէր... Սա կը ցանկանայի, որ նա շատ զեղեցիկ լինէր, շատ հարուստ, օ՛հ աշխարհս երեսի ամենահարուստը և ամենազեղեցիկը: Սա կ'ունենայի ձիեր, որոնք խրինջոցի ձալնը կըլսէի լուսամուտներիս տակ,—գոհարներ, որոնք կը հոսալին ծնկներիս վրա, ոսկի, որը անձրևի և հեղեղի նման կը թափէր ձեռներիցս, երբ բաց կ'անէի նրանց»:

Յետոյ կամաց-կամաց այդ զգացմունքը ամբողջովին տիրապետում է աղջկան: Երբ նա լսում է իր բարեբարների պատմութիւնը Ֆելիսիանի բարձր ծագման, հարստութեան, գեղեցկութեան մասին, նրա մէջ, ինքնաներշնչման օրէնքին համաձայն, ցանկութիւնը համոզմունք է դառնում. և այդ խեղճ բանւոր աղջկայ ւզեղում և սրտում արմատանում է այն միտքը, թէ նա սիրում է Ֆելիսիանին և թէ Ֆելիսիանը նրա փեսացուն է:

«Երբ սպասածս երիտասարդը կը գալ, մենք խփոյն միմեանց կը ճանաչենք: Սա նրան երբէք չեմ տեսած, բայց գիտեմ ինչպէս է: Նա ներս կը գալ, կ'ասի՝ ես եկել եմ քեզ հետ տանելու: Այն ժամանակ ես կ'սեմ. պատում էի քեզ, վերցրու ինձ: Նա կը վերցնի ինձ և աչքս ամեն բան կը վերջանալ: Մենք կ'երթանք պալատը և կը պարկեմք ոտիով և աղամանքներով զարդարած մահճակալի վրա: Օհ! աչս շատ պարզ է»!

Իսկ երբ Հիւբերտինը նրան ցնորւած է անւանսւմ՝

—Սա սպասում եմ և նա կը գալ, պատասխանում է Անժեւիկը:

Եւ երբ որ Ֆելիսիանը մի օր ներս է մտնում՝ լուսամուտով նրա ննջարանը, նա չի վրդովւում, կարծես վաղուց սպասելիս էր եղել:

—«Մօտ եկեք, ևս ձեզ սպասում էի» ասում է նա:

Անժեղիկը մեռնում է Ֆելիսիանի հետ ամուսնանալու ժամանակ և այս բռնանում Զոլան մաքուր է պահել սէրը: Սիրահարւած Անժեղիկը մեռնում է առանց նիւթականացնելու իր զգացմունքը: Այս է դուցէ, որ այս գեղեցիկ վէպին բռնանտիկ դայն է տալիս, որը դուր զարձացրել է մեծ հեղինակի հակառակորդներին, կարծել տալով նրանց, թէ Զոլան հրաժարւել է իր ուղղութիւնից!

L'Oeuvre (Գործ) վէպում (որը մենք մի քիչ յետոյ կ'ուսումնասիրենք մի ուրիշ տեսակէտից) սիրոյ զգացմունքը բռնանի ամբողջ ընթացքում կուի է վարում մի ուրիշ կրքի, գեղարւեստամոլութեան հետ:

Կլոդը մի տաղանդաւոր նկարիչ է, որը Կարոլինի սիրականն է դառնում; ամուսնանում է նրա հետ, մի արու զաւայ է ունենում նրանից, սակայն երբէք չի սիրում այդ կնոջը իսկական, ամեն ինչ լափող սիրով: Միշտ սէրը դէպի գեղարւեստը ճնշւած է պահում նրա մէջ սէրը դէպի Կարոլինը: Այս վերջինը միշտ զանգատուում է, թէ իր աճուսնու սիրտը ամբողջովին նւիրւած է նկարչութեան, որը նրա ախոյեան է և որին չաղթել նա անկարող է:

Մեր առաջ բերած չորս բռնանները.—«Ապրելու երջանկութիւնը», «Աբբայ Մուրէի Մեղքը», «Երազը» և «Գործը»—այս սիրոյ էությունները—լրացնում են միմեանց՝ սիրոյ հոգեբանութեան տեսակէտից. 1) Սէր, որը զարգանում է առանց արգելքի, այսպէս ասած, բնական-կենդանական օրէնքին համաձայն (Ապրելու երջանկութիւն): 2) Սէր, որը իդէալէս է աճում, հասունանում նոյնպէս սեռական հասունութեան ազդեցութեան ներքոյ և մարմնանում է մի երիտասարդի մէջ, մնալով անարատ և զաղափարական (Երազ): 3) Սէր, որը կուում է մի ուրիշ կրքի՝ կրօնամոլութեան հետ և ժամանակաւորապէս չաղթող է հանդիսանում (Աբբայ Մուրէի Մեղքը): 4) Աերջապէս սէր, որը նոյնպէս կուում է մի կրքի—արւեստամոլութեան հետ, բայց չաղթում է նրանից (Գործ):

Զոլաի հոգեբանութիւնը ընդհանրապէս, այսպէս ասած, հիւանդական է:

Նրա հերոսների մեծ մասը մոլիներ (մանիակներ), խելագարներ են, որոնց մոլութիւնները սոսկալի փնասներ են հասցնում նրանց շրջապատողներին և հասարակութեանը: Այլի առաջ ունենալով հերոսի ժառանգական յատկութիւնները, հետեւելով նրա հիւանդական յակուֆների զարգացման, մենք նկատում ենք, ինչպէս կամաց-կամաց, անզգալի կերպով, յակումը կիրք է դառնում և կիրքը մոլութիւն, որը վերջանում է կամ խելացնորութիւնով կամ մահով:

Այսպէս Զոլաի հոգեբանութիւնը վերցրած է զգեստներից, որոնց մէջ փակւած են յաճախ աւելի առողջ անձնաւորութիւններ, քան թէ նրա հերոսներից շատերը:

Գիւնար է Բուգոն-Մակկարների շարքից՝ մի բոման գտնել, որի մէջ մի հիւանդ հերոս չլինէր: Հետեւաբար Զոլաի մի քանի վէպերը վստահաբար կարելի է մօտեցնել անմահ Դոստոեւսկու հրաշալի բոմաններին, որոնք մի հանճարեղ գրողի գործ են և Գի դը Մոպասանի մի քանի գրածքներին:

Թէև Զոլաի բոլոր վէպերում հոգեբանական տարրը մի շատ խոշոր տեղ է բռնում, այնու ամենայնիւ նրանց մէջ կարելի է գտնել մի քանիսը, որոնց մենք վստահ կարող ենք ընդունել, իբրև հոգեբանական բոմաններ: Սրանք են, բացի մեր ուսումնասիրած վէպերը. *L'Oeuvre*, *La Bête Humaine*, *Le Docteur Pascal* և ուրիշները:

L' Oeuvre (Գործ) մի խրատական հոգեբանական էտիւդէ է մի հիւանդական կրքի—գեղարւեստամոլութեան:

Կլոդը մի երիտասարդ նկարիչ է, որի մտքում բուն է դրել մի կիրք, այն է՝ մի նոր գեղարւեստական դպրոց ստեղծել:

Կլոդի բոլոր միւս զգացմունքները ընկճւած են այս ամեն ինչ լափող կրքի առաջ, որը կամաց-կամաց մի սոսկալի մոլութեան (*mania*) է հասնում:

Երբ Կարոլինը բաց է անում իր կուրծքը, որպէս զի նա նկա-

րի, Կլոդը մոռանում է, որ նրա գէմ նստած է նրան սիրող մի կին: Նկարչի ամենաչաղթ կիրքը որոնում է միայն այս ղեղեցիկ կնոջ կաշու գոցների խաղը, ճառագայթների անդրադարձումն և նրա ամբողջ հոգեկան ուժերը նւիրւած են այս իղձին:—Ներշնչել սպտկերին այն կեանքը, ջերմութիւնը, որը խաղում է այդ կնոջ կաշու մէջ:

Երբոր նրա միակ զաւակը մեռնում է քաղցածութիւնից և մինչդեռ մայրը ջարդում է ձեռները և մազերը պոկում, Կլոդը սառնասրտութիւնով, իր ծնողական կսկիծը մոռացած, մերկացնում է երեխայի դեռ չստեղծ դիակը և վրձինը ձեռին սկսում է նկարել նրան:

Այս երեւոյթները արդէն զգուշացնում են մեզ, որ ղեղարւեստի փոփազը, որը մի բնական յակումն է, Կլոդի մէջ կրքի է փոխւում: Հմուտ հոգեգէտը հասկանում է արդէն, որ այդ մարդը արագ քայլերով խելագարութեան է դիմում: Եւ, ճշմարիտ որ, այդ կիրքը շուտով դառնում է *idée fixe*, որը փոխւում է մոլութեան և հետեւաբար խելացնորութեան: Եւ այս մոլութեան զարգացումն ճիշդ պատմւում է բոմանի մէջ, այնպէս որ հիւանդական հոգեբանութեան տեսակէտից չի կարելի չհամաձայնել հեղինակի հետ:

Այսպէս, միանգամայն ճշմարիտ է, որ, այդպիսի հոգեկան անկանութիւնների մէջ, մարդիկ յանկարծ անցողական պատրանքներ (իլլիւզիա) և ցնորքներ (հալլիւցինացիա) են ունենում: Վերցրէք այն հիանալի տեսարանը, որտեղ նա նստած դիտում է իր գլուխ-գործոցը կիսատ խաւարի մէջ: Նրա սպտկերը, որի վրա ծախսել էր իր ամբողջ հանձարը, յանկարծ ձաքճաքւում է, փշրւում է և տապալւում, ինչպէս ինքն է ասում: Կամ նրա այն օտարոտի սպտկերը, որը ներկայացնում է Սենա գետի ջրի երեսին, Պարիզի կենդրոնում կանգնած, ածուխով լի մի մակոյկ և նրա վրա ածուխից սևացած բանւորների բազմութեան մէջ երեք մ երկ կանայք:

Մի օր նա վեր է կենում գիշերը և նոյն ինքնամոռացման մէջ ներկում է զանազան գոյներով իր նկարած կնոջ և, ինչպէս Կարոլինն է ասում, նրանից կուռք է շինում կարմիր փորով և կապուտ մազերով: Երբ այդ տեսողական ցնորքը անցնում է, երբ այդ հիւանդը սթափւում է և տեսնում է, որ նրա ուղեղը խախտւած է,

հանձարը խանդարւած, յոյսերը փլատակւած և նա անդունդի ծալրին է կանգնած, այն ժամանակ նա անում է այն, ինչ որ անում են առհասարակ այդ տեսուկ խելագարները. — նա կախում է:

La Bête Humaine (Գազան Մարդիկ) մի ուժեղ վէպ է, իր գործող անձերի հիւանդական հոգեբանութիւնով: Նա մեզ յիշեցնում է Братья Карамазовы սոսկալի բոմանը:

Թէ գլխաւոր հերոս ժաքը, թէ նրա սիրունի Սեւերինը, թէ Միգարը և նրա ամուսինը ու աղջիկը — բոլորը նեարդալին հիւանդոտ մարդիկ են, որոնց մոլութիւնները այնքան սարսափելի են, որ հեղինակը ամենայն իրաւունքով կարող էր նրանց գազան մարդիկ կոչումն տալ:

Ժաքը երկաթուղու վրա մաշինիստ է և այնքան է սիրում Սեւերինին, որքան սա ատում է իր ամուսնուն: Բայց ժաքը մի սոսկալի մոլութիւն ունի — մարդ սպանելու մոլութիւնը:

Հոգեկան հիւանդութիւնների մէջ նկարագրւած են այդպիսի դէպքեր. — մարդիկ, որոնք մի զարհուրելի անդիմադրելի յակումն ունեն դէպի մարդասպանութիւնը, և որոնք մի աննկարագրելի երջանկութիւն են զգում, երբ որ արիւն են հոսեցնում... Այս սոսկալի ախտը հիւանալի կերպով նկարագրւում է Ջոլան իր «Գազան մարդիկ» բոմանի մէջ: Ժաքը չի կարող սառնասրտութիւնով բաց մարմինը տեսնել. իսկոյն «արեան փափագը», արթնանում է նրա մէջ: Եւ որքան աւելի քնքոյշ է այդ մարմինը, այնքան աւելի պահանջող է այդ փափագը: Այս սոսկալի կիրքը թունաւորում է ժաքի ամբողջ կեանքը, նրա ամենաերջանիկ րոպէները...

Ժաքը մի օր մենակ գտնելով մի սիրուն աղջկայ, Յլորին, որին վաղուց ճանաչում էր և որը սիրում է նրան, գրկում է այդ աղջկան և, մի փոքր դիմադրութիւնից չտուց, Յլորը յաղթւած է, ժաքը արդէն գետին է պառկեցրել նրան, պատառում է նրա շորերը, և բացում է նրա հարուստ ու ճկալի պէս սպիտակ կուրծքը:

«Այն ժամանակ նա շնչասպառ կանգ առաւ և փոխանակ տիրելու աղբ աղջկան, նախքան նրա վրա: Մի ինչ որ կատաղութիւն զգաց նա իր սրտում, մի վալքենի կիրք, որը ստիպեց նրան աչքերը իր շուրջը դարձնել և մի զէնք, մի քար որոնել նրան սպանելու համար: Նրա աչքն ըն-

կաւ մկրատին, որը վաւր էր ընկել Ֆլորի ձեռքից, և նա շուտ վերցրեց ալդ մկրատը և քիչ էր մնացել, որ խրի Ֆլորի մերկ կուրծքը, երկու ծծերի մէջ! Բաւց մի մեծ սարսուռ անցաւ նրա մարմնի մէջ, և ուշքի բերեց նրան. նա զէն գցեց մկրատը և գլուխը կորցրած փախաւ»:

Նա վազում է անդադար գիշերւայ խաւարի մէջ առանց ետ նայելու, զարհուրած իր հիւանդութեան այս սարսափելի արտայայտութիւնից: Պատանեկութիւնից սկսած այդ սարսափելի կիրքը հալածում էր նրան և դադար չէր տալիս: Քանի անգամ, տասնըվեց տարեկան հասակից, նա ուզեցել է սպանել մատաղ աղջիկներ, նորաստակ հարսեր, որոնց պարանոցի վրա նա իր դանակի տեղը վաղօրօք որոշել էր...

«Քանի որ նա չէր ճանաչում ալդ կանանց, Բնչ կատաղի վրէժ ու Նէր արդեօք առնելու նրանցից», հարցնում է ինքն իրան:

Զուլան այս հիւանդութեանը ժառանգական ծագումն է տալիս և պատասխանում է ժաքի հարցին նոյն բովանդի մի ուրիշ պատկերում: Սեւերինը պատմում է ժաքին, թէ ինչպէս նա իր ամուսնու հետ սպանեցին Գրանմորենին, (որովհետեւ նա բռնաբարել էր Սեւերինին, երբ սա զեռօրիորդ էր): Սեւերինը ընկել էր Գրանմորենի ծնկների վրա, որպէս զի արգելի նրան ոտերով պաշտպանւել, այն ինչ նրա ամուսինը տապալել էր նրան և դանակը սիրտն էր խրում:

Ժաքը, որը ամբողջ պատմութեան ժամանակ չուզման մէջ էր, հարցնում է շնչասպառ:

— «Սպասիր, սպասիր... Եւ դու ընկել էիր նրա ոտների վրա, և դու զգացիր, որ նա մեռնում է:

Եւ նրա մէջ մի կատաղի ալիք բարձրացաւ հոգու խորքերից և արեան կատաղութիւնը վերստին տիրեց նրան: Նրա մէջ վերստին յարութիւն առաւ սպանելու հետաքրքրութիւնը:

— Իսկ դանակը? Դու զգացիր, ինչպէս դանակը խրեց մարմնի մ

— Այո, մի խուլ հարած զգացի:

— Ահ! մի խուլ հարած... Դու հաւաստի ես, որ ալդ ձալնը կտրածի ձալն չէր?:

— Ո՛չ, ալդ հարածի ձալն էր:

— Յետոյ, նա ցնցեց, աչքէս չէ:

— Այո, երեք ցնցում ունեցաւ, ցնցումներ, որոնք անցան նրա ամբողջ մարմնով և աչքքան երկար, որ ես զգացի նրա ոտների ծալերին:

—Եւ ալդ ցնցումները փախտացրին նրան, ահպէս չէ արդեօք!

—Այո, առաջինը շատ սաւտիկ կիրպով, իսկ միւս երկուսը—աւելի թուլ:

—Նա մեռաւ, իսկ դու, ինչ ներգործութիւն ունեցաւ ալդ քեզ վրա, երբ տեսար, որ Նա մեռնում է ալդպէս, մի դանակի հարւածից:

—Ինչ վրա՞նք Ոհ, չգիտեմ:

—Զգիտես, ինչի ես սուտ խօսում? Ասան, ասան, ինչ զգացիր դու ահա ժամանակ, ասան, պարզ ասան... վիշտ?

—Ո՛հ, ո՛չ, վիշտ չէր զգացածս!

—Հրճւանք?

—Հրճւանք? Ահ, չէ, հրճւանք չէր ալդ:

—Ինչ ուրեմն, հոգեակոխ? Աղաչում եմ, ասան, ամեն ինչ ասան... Եթէ գիտենալիր, թէ... Ասան, ինչ է զգում մարդ?

—Տէր Աստուած, միթէ կարելի է ալդ բացադրել... Այս մի զարհուրելի բան է, մարդ չափշտակում է... օհ, ահպէս հեռու է թռչում նրա հոգին, ահպէս հեռու! Այս մի բոպէի մէջ ես աւելի ապրեցի, քան թէ ամբողջ կեանքումս,

Սեւերինը այս պատմութիւնից յետոյ քնում է Ժաքի դռանքի մէջ, այն ինչ սա անկարող է աչքերը խփել: Այս սպանութեան պատկերը իր բոլոր մանրամասնութիւններով անդադար նրա աչքի առաջն է:

«Ահա դանակը խրում է կոկորդը, մի խուլ խռոց հանելով, մարմինը երեք անգամ ցնդում է երկար ցնցումներով, կենդանութիւնը փախչում է տաք արիւնի հետ, և այս արեան հոսանքը Ժաքը զգում էր իր ձեռքերի վրա: Քսան, երեսուն անգամ դանակը մտաւ, մարմինը ցնցեց, Այս մի զարհուրելի բան էր, որը խեղտում էր նրան: Ոհ, ալդպիսի մի դանակի հարւած տալ, վերջապէս բաւականութիւն տալ ահա յաղեմի բաղձանքին: Խմանալ թէ ինչ է զգում մարդ ալդ ժամանակ, տեսնել վերջապէս ահա բոպէն, երբ մարդ աւելի է ապրում, քան թէ իր ամբողջ կեանքումս»:

Այսպիսով Զուլան բացադրում է մեզ հոգեբանօրէն այս մոլութեան իսկութիւնը: Ալդ հիւանդութիւնը մի կատաղի պահանջ է իմանալու, թէ ինչ է զգում մարդ սպանելու բոպէին:

«Չնայելով իր ջանքերին որ քնի, մի աներևութ ձեռք բաց էր պահում նրա աչքերը և խաւարի մէջ սպանութիւնը կրկին պատկերացաւ իր արիւնոտ մանրամասնութիւններով. կրկին դանակը խրեց, մարմինը ցնցեց: Մի կարմիր անձրեւ պատուեց մթութիւնը, կոկորդի վերքը բացեց, լալնացաւ, կարծես կացինի ճեղքած լինէր»:

Ամբողջ գիշեր այդ պատկերները չթողեցին նրան հանգստանալ: Երբ ազօթարանը բացւեց, երբ հազիւ սկսեց նա զանազանել սենեակի միջի իրերը, նրա աչքն ընկաւ այն դանակին, որը մնացել էր ընթրիքից, և այլ ևս չկարողացաւ պոկել իր հայեացքը նրանից: Երբ լոյսը բացւեց, Սեւերինը դեռ քնած էր հանդարտ քնով, երեխայի նման շնչելով: Այն ժամանակ ժաքը զգուժ է մի սոսկալի, անդիմադրելի պահանջ. — վայր թռչել, վերցնել այդ դանակը և «խրել մինչև քոքը ալս կանացի մարմնի մէջ»: «Նա լսում էր հարածի խուլ ձայնը, տեսնում էր, ահա մարմինը ցնցւեց երեք անգամ, չետու մահը փալտացրեց նրան, արիւնով չաղաղած»:

Սարսափի մէջ ժաքը, երկար ներքին կռից յետոյ, վայր է ցատկում անկողնից, արագ հագնւում է և դանակը ձեռին դուրս է վազում, որպէս զի մի ուրիշ կին սպանի, «քանի որ այդ սպանութիւնը մի անդիմադրելի ներքին պահանջ էր»...

Փողոցում նա պատահում է մի երիտասարդ կնոջ, պաշտելու չափ դեղեցիկ, ուրախ և երջանիկ աչքերով: Նա հետեւում է այդ կնոջ, նստում է նրա հետ երկաթուղու վագոնը, դանակի կոթը ձեռքում սեղմելով, սպառնալից յարմար բոլակին դանակը նրա վիզը պցկելու:

Բայց յանկարծ ամեն ինչ խառնւում է ժաքի մոքում և նա իրան կրկին այն փոքրիկ սենեակումն է տեսնում, որտեղ հանգիստ քնով դեռ քնած էր Սեւերինը: Յիշում էր միայն, որ դանակը դուրս էր նետել վագոնի լուսամուտից:

Այսպիսով Զոլան մի հմուտ հոգեբան է հանդիսանում իր այս էսթիլում: Այս մոլութիւնների բնորոշ յաակութիւնը, որը զանազանում է նրանց խելագարութիւնից, այն է որմարդ կարողանում է դեռ կռւել և սանձել առաջիններին գոնէ մի որոշեալ ժամանակ:

Զոլաի այս բոմանի մեծ մասը նւիրած է իսկապէս այս կռւի նկարագրութեանը:

Բայց վերջապէս մի օր կամքը պիտի ընկճէր և մոլութիւնը իրն անէր:

Մի գիշեր, երբ ժաքն ու Սեւերինը երկաթուղու կայարանի մօտի մի առանձնացած տան մէջ սպառնալու էին սպանել Սեւերինի ամուսնուն, որին խաբելով այստեղ էին կանչել Պարիզից, երբ այս

գեղեցիկ կինը մերկ նրա կողքին, գրկելով նրա պարանոցը, համբուր-
ներ ու գգանքներ էր յայցում նրանից, խեղճ ծաքի կիրքը աւելի ևս
անդիմադրելի կերպով յարութիւն է առնում նրա հոգում: Նա սեւե-
ռել էր Սեւերինի վրա իր խելացնոր տէքերը: Նա մի պահանջ էր միայն
զգում, մահացնել այս իր սիրած կնոջ, այն ինչ խեղճ կինը կրկնում էր.

— Գրկիր ինձ, գրկիր ինձ...

«Նա (Սեւերինը) ետ էր գցել գլուխը, մերկացրել կուրծքը:
Իսկ սա, տեսնելով այս սպիտակ մարմինը, որը նրա աչքին հրդե-
հի պէս փայլում էր, բարձրացրեց դանակը: Բայց Սեւերինը նկա-
տեց դանակի փայլը, ետ գցեց իրան, ապշած զարմանքից ու սար-
սափից:

— Ժակ, Ժակ... ինձ, Տէր Ասուած! Ինչի, ինչի...

Նա չպատասխանեց և վայր բերեց ձեռը:

Սոսկալի ոճիրը կատարուեց: Ծաքի հիւանդական կիրքը բա-
ւականութիւն ստացաւ. բայց որքան կռեց խեղճ մոլին, որքան
բնական է այս կռիւը և ինչպէս մարդ զգում էր, որ մի օր կամքը
պիտի ընկճէի այս անսանձ կրքի առաջ!

«Գազան Մարդիկ» ըրմանի մէջ, կրկնում ենք, համարեա բո-
լոր գործող անձերը մոլիներ են (ման իսկներ):

Բժիշկ Պասկալը (Le Docteur Pascal) մի հիա-
նալի հոգեբանական ըրման է, որի գլխաւոր հերոս—բժիշկ Պասկալը
և հերոսուհի—Վլոտիլդը յաջող հիւանդական տիպեր են ներ-
կայացնում:

Պասկալը մի յայտնի բժիշկ է իր քաղաքում, միևնոյն ժամա-
նակ նա իր ազատ ժամերը նւիրում է իր սեփական տոհմաբանու-
թեան ուսումնասիրութեանը, կամենալով ժառանգականութեան
օրէնքներ դուրս բերել նրանից: Այս նպատակով նա դիւմենտների
ահագին կոյտեր է հաւաքել: Այս կրքի հետ միասին նրա մէջ զար-
գանում է և մի ուրիշ իղձ,—գտնել մի կենսատու հեղուկ, որի
սրսկումը կաշու տակ պիտի բուժէր մարդու բոլոր հիւանդութիւն-
ները, անդամալոյծներին ոտի կանգնեցնէր, զառամեալներին երի-
տասարդացնէր:

Այս երկու կրքերը աւելի և աւելի սաստկանում են նրա մէջ,
դառնում են մոլութիւններ:

Հետաքրքրական է հետեւել այս երկու մոլութիւնների ընդհարումներին, ինչպէս մէկը աշխատում է խեղդել միւսին Պասկալի հոգու մէջ:

Այս կռիւն արդէն չափազանց դժուար էր լաւ նկարագրելու և չնայելով դրան, Զօլան մի երրորդ կիրք ևս մտնում է իր հերոսի հոգու մէջ: Այն է. — սէր դէպի իր եղբոր-աղջիկ Ալոտիլդը:

Այսպիսով Պասկալի հոգեբանութիւնը չափազանց բարդւում է այս զօրեղ կրքերի յաճախակի ընդհարումների պատճառով:

Ձեռք ասում առ այժմ, որքան չաջողեց Զօլան լուսաբանել այդ բարդ հոգեբանութիւնը: Կ'ասենք միայն, որ բնականաբար այդ կրքերից մէկը կամ միւսը ժամանակաւորապէս տիրապետում է բժշկի հոգուն և ուղղութիւն է տալիս նրա մտքերին ու գործերին:

Մի քանի ժամանակով այդ նորաբոյս սէրը դէպի մատաղահաս Ալոտիլդը, որը նրա թոուր կարող էր լինել, կլանում է նրա բոլոր հոգեկան ոյժերը: Կայ մի ուրիշ շրջան նրա կեանքում, երբ նրա միտքը զբաղւած է կենդանանուցիչ հեղուկի գտնելու իդէալ ու այնպէս է անձնատուր լինում Պասկալը այդ մօքին, որ չի սթափւում նոյն իսկ այն ժամանակ, երբ ակներև է դառնում, որ նրա այդ սրսկումները մահ են առաջացնում:

Ահրջապէս սրտի հիւանդութիւնը անկողին է դրում Պասկալին: Զգալով մահւան մօտենալը, նրա հոգին տարուբերւում է երեք մոլութիւնների մէջ: Մերթ յափշտակւած իր ժառանգականութեան թէօրիալով, նա բացատրում է բժիշկ Ռամոնին իր հայեացքները այդ մասին: Մերթ, այրւելով բացակա Ալոտիլդին կրկին տեսնելու տենչանքով, նա հաշուում է, թէ դեռ քանի ժամ է մնում իրան ասրելու, երկնչելով, մի գուցէ հոգին աւանդի մինչև իր սիրունու գալը: Եւ մերթ իր բժշկելու նոր մեթոդի—սրսկելու—մասին խօսելով:

Այս յիշած մոլութիւններից որն էր ամենագօրեղը? Զօլան իր բոմանի ընթացքում չի որոշում այդ, թողնելով այդ բացադրութիւնը զրքի վերջին, — Պասկալի մեռնելու բոպէին: Եւ, ճշմարիտ որ այս բոպէիս միայն ակներև է լինում, որ Պասկալի իսկական մոլութիւնը ժառանգականութեան օրէնքների որոնումն է:

Ահրջին բոպէին, երբ նա զգաց, որ հիւանդութիւնն արդէն

սեղմել է նրա կոկորդը, կտրել է շնչառութիւնը և խեղդում է նրան, բժիշկ Պասկալը:

«Յանկարծ ցած է գցում իրան անկողնու վրայից կամենալով ոտի կանգնել, քալել վերջին ոլժերը ժողովելով: Մի առանձին պահանջ լուսի, օդի, տարածութեան — առաջ էր մղում նրան. և Էլանկարծ նա զգաց, որ հարեան սենեակից վերադառնում է նրան իր անցած կիտնքը, իր ամբողջ կեանքը: Եւ նա վազեց ալգ սենեակի տարածքներէլով, հեալով, մարմինը ձախ կողքին ծռելով և կարասիները բռնելով:

Բժիշկ Ռամոնը արագ վազում է դէպի նա և ուզում է կանգնեցնել նրան:

Բայց Պասկալը որոշել է ոտի վրա մեռնել. նա խռառցի միջից կրկնում էր.

—Ոչ... ոչ... աչնտեղ... աչնտեղ...

Եւ մի հերոսական ճիգ անելով, նա քարշ է տալիս իր կիսամեռ մարմինը մինչև իր սեղանը և խարխափելով, աչքերն արդէն մութը կոխած, դռնում է վերջապէս թղթերի կոշտերի միջից իր տոհմաբանական ծառը և իր անւան դէմ աւելացնում է դողդոջուն ձեւով այս խօսքերը... «Մեռնում է սրտի հիւանդութիւնից 7-ին նոյեմբերի 1873 թ. 31 33 ոոյ Կլոտիլդի ճիւղի վրա գրում է հետեւեալը. «Ծնեց մի որդի իր հօրեղբայր Պասկալից»:

Այսպէս մեռնելու վայրկեանին բոլոր միւս մոլութիւնները անյետանում են այս մեծ ցնորքի դէմ.—լրացնել իր տոհմաբանութեան պատմութիւնը, որից հետագայ գիտնականները ժառանգականութեան մեծ օրէնքները պիտի դուրս բերեն:

Այժմ թող թոյլ տրւի մեզ մի քանի խօսքով ամփոփել մեր «սասածները Էմիլ Զոլայի բոմանների հոգեբանութեան մասին:

Զոլան իր բոլոր բոմաններում երևան է դուրս գալիս, իբրև մի զօրեղ հոգեգէտ, իսկ այդ վէպերից շատերը կարելի է ընդունել համարեա իբրև օոսկ հոգեբանական էտիւքներ: Նրա լայն հանճարը չէր կարող բաւականանալ ժամանակից հեղինակների ներկայացրած անգէտին, իդէալական հոգեբանութիւնով: Մանօթ լինելով արդի հոգեբանական գիտութեանը, որը աշխատում է բոլոր հոգեկան շարժումները մարդու օրգանների դերակատար ֆունկցիաներին վերածել, մեծ վիպագիրը այս գիտնական տեղեկութիւն-

ները բովանդակում են մտքեր, Ֆիզիոլոգիան ուսուցանում է մեզ, թե սերը արգասիք է սեռական օրգանների հասունութեան, Զոլան իր մի քանի բովանդակում աշխատում է այս տեսակետից մեկնել իր հերոսների մեջ սիրոյ ծագումն։

Միւս կողմից գիտութիւնը այսօր ցոյց է տալիս, թէ ինչպէս մարդկային մի որ և է բնական զգացմունք կարող է կամաց-կամաց փոխուել *idée-fixe*-ի, մոլութեան և խելագարութեան, նոյնը անում է Զոլան իր բովանդակում։

Զոլաի ուսումնասիրած հոգեկան կրքերը չափազանց բազմակողմանի են։ Ամենից շատ նա ծանրանում է սիրոյ էտիկէի վրա, որը կարծեմ առաջին անգամ նրա գրչի տակից դուրս է գալիս իբրեւ մի բնական և բացադրելի հոգեկան երևոյթ, որը յաճախ հիւանդական բնավորութիւն է ստանում։

Առհասարակ մեծ նատուրալիստի վէպերում նկատելի է հերոսների զգացմունքների ծայրայեղութիւնը, որը հասցնում է նրանց խելագարութեան։ Այնպէս, որ շատ վէպերում Զոլան սոսկ հոգեկան հիւանդութիւններ է նկարագրում (Գազան-Մարդիկ, Բժիշկ Պասկալ և այլն)։ Նրա վէպերի գլխաւոր հերոսները, որոնք պատկանում են Բուգոն-Մակարների ծառին, — համարեա բոլորը հոգեպէս հիւանդներ են։ Սրա բացադրութիւնը մենք կը գտնենք մեր առաջիկայ յօդածում, որը կը ներկենք ժառանգականութեան ուսումնասիրութեան Զոլաի վէպերում։

(Կը շարունակուի.)